ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/15868-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-940-19.04.2021-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 502 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-

ԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-940-19.04.2021-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է կրճատել «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետները, կապված նախաձեռնող խումբը ձևավորելու, տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալու, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Ոստիկանությանը համայնքում տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի վերաբերյալ հարցում ներկայացնելու, նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության կամ դրանց բացակայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու, ստորագրությունների հավաքման, հավաքված ստորագրությունների վավերականության հաստատման հետ:

Նախագծով առաջարկվող կարգավորումների կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Համայնքների վարչական սահմանները փոփոխելիս համայնքների լսված լինելու իրավունքը նշանակում է, որ տեղական ինքնակառավարման միավորի սահմանների ցանկացած փոփոխություն իրականացնելիս (համայնքների միավորում կամ բաժանում, մի համայնքի վարչական տարածքի ներառում մեկ այլ համայնքի վարչական տարածքի մեջ) պետությունը պետք է նախապես, ուղղակի կամ անուղղակի կերպով խորհրդակցի տվյալ համայնքի/համայնքների և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ և հաշվի առնի նրանց կարծիքը վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ: Ընդ որում, շահագրգիռ համայնքները պետք է մասնակցեն համայնքների վարչական սահմանների փոփոխման գործընթացի ինչպես նախապատրաստական, այնպես էլ բուն որոշման կայացման փուլին և ունենան իրական հնարավորություն իրենց կարծիքը հայտնելու և այն լսելի դարձնելու համար:

«Տեղական հանրաքվեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ նախաձեռնող խումբն ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակերպում է գրանցվելուց հետո՝

(…)

3) սույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված դեպքում՝ 30 օրվա ընթացքում:

Նախագծով առաջարկվում է համայնքների միավորման կամ բաժանման հարցերով հանրաքվեի անցկացման դեպքում ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակերպել գրանցումից հետո 10 օրվա ընթացքում:

Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ստորագրությունների հավաքումն իրականացվում է ստորագրությունների հավաքման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային եղանակով:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի համաձայն՝

«11. Տեղում ստորագրությունների հավաքում կազմակերպվում է համապա-տասխան համայնքի՝

1) համայնքապետարանում.

2) բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում.

3) Երևան քաղաքում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում:

12. Տեղում ստորագրությունների հավաքումն իրականացնում է նախաձեռնող խմբի ներկայացուցիչը՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ, ինչպես նաև իրականացնում են նոտարները՝ նոտարական գրասենյակներում: Տեղում ստորագրությունների հավաքման վայրը տրամադրում են մարմինների ղեկավարները նախաձեռնող խմբի գրավոր դիմելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:»:

Վերոգրյալի հաշվառմամբ ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակեր-պելու համար տրամադրված իրական ժամկետը էապես կրճատվում է, եթե հաշվի առնենք, որ համայնքի ղեկավարը 3 օրվա ընթացքում է տրամադրելու ստորագրություններ հավա-քելու համար տրամադրվող տեղերը, իսկ քանի որ որպես այդպիսի տեղեր հանդես են գա-լիս համայնքապետարանը, բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրը, ուստի հարկ է նաև հաշ-վի առնել, որ այդ տեղերում ստորագրահավաքը կարող է կազմակերպվել աշխատանքային օրերին: Նման կանոնակարգումների պայմաններում կա վտանգ, որ ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակերպելու համար տրամադրված իրական ժամկետը կկազմի 5 օր:

Վերոգրյալ կանոնակարգումների վերլուծությամբ պարզ է դառնում, որ նախաձեռնող խումբը, նախ, պետք է գրանցվի, այնուհետև պետք է դիմի համայնքի ղեկավարին, ով նա-խաձեռնող խմբի գրավոր դիմելուց հետո՝ երեք օրվա ընթացքում պետք է տրամադրի տեղում ստորագրությունների հավաքման վայրը: Ստորագրություններ հավաքելու գործըն-թացը կազմակերպելու համար տրամադրված ժամկետի հաշվարկի մեկնարկը կատարվում է նախաձեռնող խմբի գրանցվելուց:

Կարծում ենք՝ առաջարկվող փոփոխությունը չի ապահովի կամ անիրական կդարձնի Սահմանադրության 190-րդ հոդվածով նախատեսված՝ համայնքի բնակիչների կարծիքը համայնքի վարչական սահմանների փոփոխության հարցերով լսելի դարձնելու պահանջ-ների կատարումը:

Ուստի, Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված նորմի պահպանման իրական հնարավորություն ընձեռելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառա-վարությունն առաջարկում է համայնքների միավորման կամ բաժանման հարցերով հան-րաքվեի անցկացման դեպքում ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակեր-պելու համար նախաձեռնող խմբի գրանցումից հետո նախագծով նախատեսված 10-օրյա ժամկետի փոխարեն սահմանել 20-օրյա ժամկետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 502 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վահե Տերտերյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-940-19.04.2021-ՏՏԳՐ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-940-19.04.2021-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական հանրաքվեի մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-347-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7.1-ին հոդվածի.

1) 4-րդ մասում «երեք» թիվը փոխարինել «երկու» թվով,

2) 6-րդ մասում «հինգ» թիվը փոխարինել «երեք» թվով:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի.

1) 2.1 մասում «հնգօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով,

2) 4-րդ մասի «եռօրյա» բառը փոխարինել «երկօրյա» բառով,

3) 17-րդ մասի 3-րդ կետում «30» թիվը փոխարինել «10» թվով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «15 օրվա» բառերից հետո լրացնել «(սույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված դեպքում՝ 5 օրվա)» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության ծրագրում (ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի ?65-Ա), ինչպես նաեւ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի ?650-Լ որոշմամբ հաստատված գերակա խնդիրների եւ միջոցառումների ցանկում ընդգրկվել է «Վարչատարածքային բաժանման մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» միջոցառումը:

Վերոնշյալ որոշումների կիրարկումն ապահովելու նպատակով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը մշակել եւ շրջանառել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն

կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերով առաջարկվում է իրականացնել համայնքների միավորման ծրագրեր Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Շիրակի մարզերում: Միավորման ծրագրերում ներգրավված է լինելու թվով 186 համայնք, որոնց միավորման արդյունքում ձեւավորվելու է թվով 11 համայնք: Այդ համայնքների գերակշռող մասի ՏԻՄ-երի լիազորությունները լրանում են 2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

«Տեղական հանրաքվեի մասին» օրենքի 7.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն? «Համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում Կառավարության լիազոր պետական մարմինը պաշտոնապես ծանուցում է համապատասխան համայնքների ղեկավարներին:»: Ծանուցումը ստանալուց հետո՝ միավորվող համայնքներում օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում կարող են նախաձեռնվել տեղական հանրաքվեներ՝ համայնքների միավորման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության հարցին կարծիք արտահայտելու առարկայով:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքների իրազեկումը նախատեսվում է իրականացնել ԱԺ արտահերթ ընտրություններից հետո՝ ս.թ. հունիս ամսվա վերջին, իսկ «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով ներկայումս սահմանված ժամկետները (մոտ 200 օր) խնդիրներ կառաջացնեն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը 2021 թվականի աշնանը ԱԺ կողմից ընդունելու եւ շահառու համայքներում ՏԻՄ-եր ձեւավորելու տեսանկյունից՝ մշակվել է «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է կրճատել որոշ ընթացակարգային ժամկետներ:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք

Նախագիծը մշակվել է համատեղ՝ հեղինակի եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Օրինագծի ընդունումն իրատեսական կդարձնի համայնքների միավորման հարցով հնարավոր տեղական հանրաքվեների անցկացումը մինչեւ հոկտեմբեր ամսվա վերջը, որից հետո՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի ընդունումը եւ միավորվող համայքնբերի ՏԻՄ-երի ձեւավորումը: